ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

3 մայիսի 2021 թվականի N51-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱԿՏՈՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 30-ի <<Համայնքային սեփականության հողակտորը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվության մասին>> N24-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,28706 հա հասարակական կառուցապատման /կադաստրային ծածկագիր 04-065-0113-0003/ հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Տիգրան Վլադիմիրի Հովսեփյանին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի /կադաստրային ծածկագիր 04-065-0613-0001/ ընդլայնման նպատակով:

2. Հողամասի ուղղակի վաճառքի համար սահմանված գումարը՝ 12 750 700 /տասներկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամը պետք է վճարվի ֆոնդային եկամուտների 900325175132 հաշվեհամարին:

3. Օրենքով սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 3
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 մայիսի 2021 թվականի N52-Ա

ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի N55-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Նարեկ Լևոնի Պողոսյանին** տրամադրել 50 000 ՀՀ դրամ դրամական օգնություն երեխայի՝ **Լևոն Նարեկի Պողոսյանի** ծննդյան կապակցությամբ /ծնված 2021 թվականի մարտի 28-ին, հիմք ծննդյան վկայական ԲԱ379634, տրված ՔԿԱԳ գործակալություն ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից՝ 2021 թվականի մարտի 30-ին/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 7

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2021 թվականի N53-Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 12-ին **Տիգրան Վլադիմիրի Հովսեփյանի** դիմումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան փողոց թիվ 4/1 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 1,49294 հա հասարակական կառուցապատման /կադաստրային ծածկագիր 04-065-0613-0001/ և Երևանյան խճուղի թիվ 1/4 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 0,28706 հա հասարակական կառուցապատման /կադաստրային ծածկագիր 04-065-0113-0003/ երկու հարակից հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Երևանյան խճուղի 1/4:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 12

համայնք Մերձավան